



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐԻՍՏԵՐ

ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐԻՍՏԵՐ

ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 173

14 ՆՈՅԵՄԲԵՐ 1914

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ՏՕՆԱՑՈՅՑ

Նոյեմբեր	15	†	Կիր.	ակ.	Յիսնակաց Բարեկենդան:
	16		Բշ.	բձ.	Ա. or պահոց Յիսնակաց:
	17		Դշ.	բկ.	Բ. » »
	18		Դշ.	գձ.	Գ. » »
	19		Եշ.	գկ.	Դ. » »
	20		Ուր.	դձ.	Ե. » »
	21	†	Շք.	դկ.	Տօն Ընծայման Ամենօրհնեալ Կուսիք ի տանարն:



ԿԱԹՈՂՈՍԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏՆՂԵԿԱԴՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹԱԹԱԹԵՐԹ

Զորրոդ սարի 14 Նոյեմբեր 1914 թիւ 173

«Սրբազան Բանանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Առաջանց Շաբաթերը շա-
նունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
արել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Սրբազան Հայրն սրագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարգ. Մերի սէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Ի. Թեոքեան Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ.
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուսմամբաւ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

ԲԱՐԵՍԵՐ ՊԱՏՄԱՆԻՆ

Ա.

Առաւօտ էր. Յակոբիկ, տասնուչորս
տարեկան տղայ մը, բանուկ փողոցի մը
անկիւնը զետեղեց կօշիկ ներկելու ծա-
ռայող իր փոքր սնտուկը. և կը պատ-
րաստէր վրձիններն ու ներկը. և մերթ
ընդ մերթ երկչոտ ձայնով կը հրաւի-
րէր անցորդները: Անբախտ մանուկին
ձայնը կը դողդողար և իրեն՝ գրեթէ
մուրալու ձեւ առնող աղաչանացը առ-
ջեւ անցորդներուն ցոյց տուած անտար-

բերութեան դէմ ընդվզում մը կը զգար
իր սրտին մէջ և կարմիր այտերը կը
գունատէին: Յանկարծ իրեն մօտեցաւ
Արամ, ինքն ալ չքաւոր, սակայն տա-
րիքով երեցագոյն:

Արամ.— Ափսո՛ս քեզի, Յակոբիկ,
մինչեւ ե՞րբ պիտի կենաս, ո՞վ իր կօ-
շիկները մաքրել պիտի տայ քեզ. ամէն
մարդ պիտի երթայ Վահանին, որ զը-
ւարթ քմծիծաղով կը հրաւիրէ ամէնքը.
արդէն անոր զգեստներն ալ քուկիննե-
րուդ պէս հին ու մին և պատառատուն
չեն:

Յակոբիկ.— Ի՛նչ ընեմ. ո՛չ դէմքս
կընամ փոխել, ո՛չ զգեստներս. ուրիշ
չունիմ:

Ա.—Օ՛, քու վրձիններդ ալ իրաւցնէ փառաւոր բաներ են. այնքան ճաղատ են որքան ծերունի կրպոյին գլուխը:

Յ. Պարո՛ն, եթէ վրձիններուս չես հաւնիր, խնդրեմ՝ աւելի աղէկները տա՛յիր:

Ա.— Կու տամ, այո՛, եթէ չաքաթօր մեր ժողովատեղին գալու ըլլաս:

Յ.— Քանի՛ անգամ՝ ըսի քեզ թէ չեմ կրնար:

Ա.— Կը զարմանամ, քանզի ուրիշ բաներու մէջ ո՛չ քաջութիւն կը պակսի քեզի ո՛չ հնարամտութիւն: Միայն այս գործին մէջ կը յամառիս:

Յ.— Սիրելի՛ Արամ, մայրիկս բնաւ չ'ուզեր որ երթամ լսեմ երբեք աղանդաւոր ու կուսակցական այն նորերուկ վարդապետութիւնները, "որոնք, կ'ըսէ, պիտի ֆնասեն քու կեանքիդ, յանցաւոր մը պիտի ըլլաս և հոգիդ ալ պիտի կորսնցնես": Դիտցած ըլլաս որ մայրիկիս ոչ թէ հրամանը, այլ լոկ կամքն միայն յաւիտենապէս պաշտելի է ինձ:

Ա.— Հա՛, ըսել է թէ կ'ուզէ որ ազօթք ընես և եկեղեցւոյ մէջ ձեռամբարձ կամ գետնամած պաղատիս: Ապո՛ւշ, չե՛ս տեսներ թէ քու ազօթքներդ անօգուտ են. կը ցաւի՛մ վրադ: Հայրիկդ մեռաւ. մայրիկդ հիւանդ, դու և պզտիկ քոյրերդ գունատած, նիհարցած, անօթութեամբ հիւծած, մաշած: Եւ դեռ չե՛ս հասկնար որ Աստուած կ'արհամարհէ զքեզ ալ, ազօթքներդ ալ:

Յ.— Այո՛, կ'երեւի թէ կ'արհամարհէ. սակայն և այնպէս աւելի կ'ուղեմ Աստուծոյ օգնութիւն խնդրել քան թէ այս աղանդաւոր և հոգւոյս թշնամի մարդիկներէ. չեմ հաւատար, չեմ վստահիր անոնց: Ամէնքն ալ իրենց

անձնական շահը կը փնտռեն. կ'ուզեն մեր սրտերէն երկնային մխիթարութիւնները խլել հանել. և Աստուած չընէ, եթէ դործերը անոնց ուղածին համաձայն յաջողելու ըլլան, հիմակուրնէ շատ աւելի մեծ պիտի ըլլար աղքատութիւն և աղէտ. Աստուծոյ անէծքը պիտի պատէ....

Ա.— Զձեզ հարստահարողները. և իրաւամբ: Այն ցնորամիտ կրօնականները, եկեղեցասէրները, այն անդուծ հարուստները, դժոխային վաշխառուները որ զմեզ կը չարչրկեն, և այն անողորմ դրամատէրներն, որոնք մարդոց բազմութիւնը իբրեւ անասնոց վոհմակներ ու ջողիւրներ կը խաշտանգեն ու կ'աշխատցնեն վատտակաբեկ, անոնք ա՛մէնքը կամ բնաջինջ պիտի ըլլան, ինչպէս արժան է, և կամ յետին չքաւորութեան պիտի մատնուին:

Յ.— Ուրեմն, սիրելի՛ Արամ, եթէ այս վերջիններուն խեղճ զաւակներն ալ ձեզի դէմ ելլեն դաւաճանեն, զանոնք ճնշելուդ և վրանին բռնանալուդ համար, ան ատեն սպանութեանց և անիրաւութեանց բնաւ վերջը չպիտի գայ. և մարդիկ աւելի արիւննուշտ պիտի ըլլան քան բորենիներ և վագրներ:

Ա.— Ո՛հ, լուէ՛, Յակոբի՛կ. դուն արդէն ծոյլ ես և մեղկ:

Յ.— Արա՛մ, դուն ալ դիտես որ ըսածդ սուտ է....

Ա.— Տե՛ս, տե՛ս, Յակոբիկ, սա եկող երիտասարդը ի՛նչպէս գեր է և զարդարուած: Ո՛հ, եթէ անոր այսօրուան նախաճաշին մէջըմբռնեմ խորտիկներուն կէսը միայն ունենայիր, դուն ալ՝ մայրիկդ ու քոյրերդ ալ մեծածախս

ընթերցե մը կ'ընէիք, և կ'աւելնար ալ գուցէ....

Յ.— Արամ, սիրելիս, խնդրեմ նախանձս մի՛ գրգռեր: Արդէն հոգիս կ'այրի՛ կը տոչորի:

Ա.— Կանչէ՛ զինքը, քու բարեկամդ է, քանի որ այս անպիտան անյագ ուրվախնապարարները չես ուզեր որ վերցուն աշխարհէս:

Բ.

(Շաւարշ կու գայ ձախեն)

Յ.— Պարո՛ն, պարոն. խնդրեմ հաճէիք թոյլ տալ որ Ձեր Ազնուաշուք Տէրութեան կօշիկները ներկեմ:

(Այս պահուն Շաւարշ չլու կեղծելով կ'անցնի. Արամ կը հրէ զՅակոբիկ Շաւարշի վրայ ու կը փախչի. Շաւարշ սրտմոտելով ապտակ մը կ'իջեցնէ Յակոբիկի երեսին, և ոտքով ալ կը զարնէ):

Շ.— Անամօթ շուն.

Յ.— Դուն ալ տեսար, պարո՛ն, որ յանցանքն իմն չէ:

Շ.— Եթէ դեռ չլուես, ոտիկանները պիտի կանչեմ. ըսաւ ու գնաց:

Յակոբիկ միայնակ.— Ստրուկի մը պէս ծեծ ուտել, շան մը պէս աքացի՛ ընդունիլ. և այս ամէնը, սա մարդածե կոճղէն.... Իրա՛ւ որ հեղգ եմ և անպիտան, ինչպէս ըսաւ Արամ: ... Հըմ. ահա՛ ուրիշ երիտասարդ մը կու գայ՝ պերճ և ազնուատոհմ ու հարուստ: Մէյ մ'ալ զինք փորձեմ. եթէ աս ալ ինձ հետ իբրեւ շան մը հետ վարուի, քեզ անձնատուր պիտի ըլլամ, ո՛վ Արամ....

Գ.

(Լեւոն կու գայ ձախեն)

Յակոբիկ.— Պարո՛ն, խնդրեմ թոյլ

տայիք որ Ձեր Ազնուութեան կօշիկները մաքրեմ:

Լեւոն.— Շատ լաւ, մաքրէ՛. այսօր քանի՛ հատ կօշիկ ներկեցիր:

Յ.— Եւ ոչ մէկ հատ, Տէ՛ր:

Լ.— Դեռ շատ մարդ չկայ ճամբաներուն վրայ: Անունդ ի՛նչ է:

Յ.— Յակոբիկ է անունս, Տէ՛ր:

Լ.— Յակոբի՛կ, ո՛րչափ ժամանակ է որ այս արուեստով կը զբաղես:

Յ.— Շուրջ երկու տարի, յորմէհետէ հայրիկս վախճանեցաւ: Անկէ առաջ այսպիսի գործերով բնաւ չեմ զբաղած, Տէ՛ր:

Լ.— Յակոբի՛կ, զիս Տէ՛ր մի՛ կոչեր. ես ալ տղայ մին եմ ինչպէս դուն. իմ անունս ալ Լեւոն է:

Յ.— Իրա՛ւ որ բարի ես:

Լ.— Պատճառ չեմ տեսներ քեզի հետ խտիւ վարուելու: Դուն կը տեսնե՞ս:

Յ.— Չեմ տեսներ. շատ հարուստներ սակայն մեզի հետ խիստ կը վարուին:

Լ.— Շա՛տ գէշ բան: — Բայց քու վրձիններդ լաւ չեն:

Յ.— Նորեր գնելու համար դրամ չունիմ:

Լ.— Յաւալի՛ բան: — Ըսէ՛ ինձի Յակոբիկ, այսօր նախաճաշ ըրի՛ր:

Յ.— Ո՛չ ես, ո՛չ մայրիկս, ո՛չ փոքր քոյրերս բնաւ կերակուր չտեսանք երէկ կէսօրէն ի վեր. միայն իրիկուան դէմ դրացուհին որ ինքն ալ աղքատ է, հացի կտոր մը տուաւ մեզ:

Լ.— Յակոբի՛կ, որչափ է պարտքս:

Յ.— Ինչպէս որ կ'ուզէք:

Լ.— Մէկ դահեկան կը բաւէ...

Յ.— Գրեթէ բնաւ այսչափ չվարձ չեմ ընդունած:

Լ.— Ահա՛ մէծիտ մը :

Յ.— Մանրուք չունիմ, չեմ կրնար մէծիտին վրան տալ :

Լ.— Ամբողջը պահէ, Յակոբի՛կ, քեզի և քու կիներուդ նախաճաշ դնէ՛ :

Յ.— Աշխատութեանս վարձքը այսօր չէ. ասիկայ միայն պարգեւ կրնայ ըլլալ. չեմ կրնար առնուլ : Հացը աշխատութեամբս չահիլ կը ջանամ, չեմ ուզեր մուրալ :

Լ.— Շատ լաւ ուրեմն. սա մէկ դահեկանը քու վարձքդ է :

Յ.— Շնորհակալ եմ, Տէ՛ր :

Լ.— Ես քու տէրդ չեմ, զիս Լեւոն կոչէ՛ : Ահա երկու մէծիտ, զասոնք քեզի չեմ ընծայեր, այլ փոխ կու տամ : Երբ բաւական դրամ չահած ըլլաս, զանոնք ինծի պիտի հատուցանես : Իսկ եթէ զիս գիւրութեամբ չկարենաս գտնել, իմանալով ուսմբս աղքատի մը պիտի տաս :

Յ.— Մայրիկիս պատճառաւ զանոնք երախտապարտ ոգւով կ'ընդունիմ : Քու բարեմոյն մարդասիրութիւնդ չա՛տ մեծ բարիք ըրած եղաւ, և շատ աւելի մեծ որքան դու իսկ չես կրնար գիտնալ, Լեւոն : Երբ հոս եկար, չարաչար բարկացեր էի. քանզի ինձ անիրաւութիւն և նախատինք ըրած էին :

Լ.— Ես տեսայ, սիրելի Յակոբիկս, քեզի անիրաւողը ես կը ճանչնամ. պիտի խրատեմ զինքը : Մի՛ կարծեր սակայն որ նա չարասիրտ մէկն ըլլայ : Յանկարծ ի զայրոյթ բողբոջով ժպտնութեամբ գործեց, չխորհեցաւ : Ներելու ես իրեն, քեզի պէս բարի ազու մը քաղցրութենէն կը յուսացուի անյիշաչարութիւն՝ որ բարիներու սրտին զարդն է, և Աստուծոյ վարձքերուն արժանի :

Յ.— Քեզի բացայայտ պիտի խոստովանիմ : Գրեթէ մտադրած էի երթալ համաձայնիլ նոր աղանդաւորաց հետ, որոնք կրօնք և իշխանութիւն կը բամահրեն և ամէն բան վեր ի վայր ընել կը նկրտին : Հիմա քու ողորմածութիւնդ, առողջ և լաւ խորհուրդներ վերահաս տատեց մաքիս մէջ :

Լ.— Մի՛ հաւատար, սիրելի Յակոբիկ, ժողովուրդը փաղաքշող այս կեղծաւորներուն. փրկութիւնը անոնցմէ չէ. անոնք միայն իրենց անձնական չահերը կը մտածեն :

Յ.— Մայրիկս ալ ստէպ նոյն բանը ըսաւ և խրատեց զիս :

Լ.— Յակոբի՛կ, սիրելի բարեկամս, յոյսդ Աստուծոյ վրայ դի՛ր :

Յ.— Իրաւունք ունիս, Լեւոն. Աստուած զքեզ ինծի ղրկելով կարծեմ ինծի սորվեցնել ուղեց որ նաև հարուստներու մէջ բարեսիրտ մարդիկներ կան :

Լ.— Ասկէց վերջն ալ եթէ բանի մը պէտք ունենաս, նորէն ինծի եկո՛ւր : Ահա իմ այցաբարտս, վրան անունս եւ բնակատեղիս նշանակուած են, կը յուսամ թէ պիտի կարենամ Աստուծով քեզի օգտակար ըլլալ : Մնաս բարով, սիրելի Յակոբիկս :

Յ.— Երթա՛ս բարով, սիրելի՛ դ Լեւոն. այսքան բարութեանդ և ինծի պատճառաւ ո՛յսչափ մխիթարութեանդ համար Աստուած զքեզ պիտի վարձատրէ :

Եւ արցունքի կաթիլ մը սահեցաւ Յակոբիկի այտին վրայէն :

ՀԻՆ ԱՄԵՐԱԹՈՒՂԹԵՐ

Օ Ր Ա Փ Ի Ր

ՄԵԾ ՀԱՆԱԾԱՆՔԻՆ

ՈՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՍԻՑ ԴԷՄ

1829 Յ ՅՈՆՈՒԱՐԻ ՄԵՅ¹

Կրկին ուզեցին հայք քաթօլիքները աքսորենք տէյի, բայց չյաջողեցան:

17 Փետր. Կիր.—Աս օր հայոցմէ քօլիցածը քէօր Կարապետը խայսէրի, խուշումճիւներու միւթէլէլլին հաճի Պետրոսը էնկիւրիւ, և մէկ խուշումճի մըն ալ ուրիշ տեղ պատրիարքին արգովը աքսորեցին, ասոնց յանցանքը աս ըսուեցաւ. մէյմը Մըսրի իննոց ոսկիյին համար որ թագաւորը մէն էր ըրեր անցնիլը, մէյ մըն ալ կէօյա քաթօլիքներուն աքսորուած ժամանակը անոր ասոր շատ բաներ ըսեր են. ըսել ուզեցին քի այսպէս մարդիկը ուր կայ նէ պիտի աքսորենք. ինչու զէրէ շատ չի վայելու բաներ ըրեր են քաթօլիքներուն. անոնք մէյմէկ ձեւով պիտի պատժենք. հիմա ես ալ կ'ըսեմ. եթէ այսպէս բան ընողները և բողոքները պատժել իթիլզա ընէ բոլոր հայոց ազգը մեծով պղտիկով ջնջելու է:

23 Շաբ.— Հայոց ժամը գացող քաթօլիքներէն հինգ տասը մարդ կանչեցին պատրիարքարանը. աս բանս ալ Պէղճեանին տիւս պարան էր. առաջէն ան գացող մարդոց ըսեր էր Պէղճեանը. Դացէք պատրիարքին աղաչեցէք մարապետներուն և ուրիշ աքսորուած կանանց իթլախը հանել տայ. դուք աս բանս խնդրեցէ՛ք, խուսուրը մենք կը նայինք. Երբ որ գացին պատրիարքէն խնդրեցին նէ պատրիարքը բէք աղէկ ըսաւ, բայց ձեզմէ մէկ զմուռած սէնէտ մը կ'ուզեմ որ գալու ըլլան նէ ֆրէնկի եկեղեցին չերթալուն քէֆիլ ըլ-

լաք: Դացողները կ'ըսեն. Մենք չենք կրնար աս սէնէտը տալ ըսելով ետ կը դառնան:

Բայց պատրիարքը կ'ապսպրէ գացող մարդոց քի, չըլլայ թէ աս խօսքերս ուրիշի զուրցէք, անցեալ անդամի պէս թանթանա կ'ըլլայ, խաֆիլ չի յաջողիր:

Յետոյ քանի մը աւուր վերջը Պէղճեան Յարութիւնը կրկին աս մարդիկը ներս զարբխանան կանչել կու տայ ըսելով պատրիարքին ուզած սէնէտը տուէք, չէ մի' ըսէք, մեղք են ֆախիրները, տահա շատ խօսք ըսելէն վերջը կ'ըսեն դացողները. չենք կրնար տալ սէնէտ և չենք կրնար ուրիշի քէֆիլ ըլլալ. զէրէ ամէն մարդ իրեն կը խառնուի. մենք քէֆիլ ըլլանք տէ ոտրա գան մտիկ չընեն նէ մենք ի'նչ ընենք, անոր համար չ'ըլլար աս բանը կ'ըսեն ետ կը դառնան:

Հայոց միտքը չարութիւն էր աս սէնէտս քաթօլիքներուն ձեռքէն առնել իրենց ձեռքը սէնէտ գտնուելովը պէտք եղած ժամանակը աս սէնէտը ցուցնեն և ասով զիրենք աղատեն, աս միտքով էր ուզածնին:

Կրկին ան գիշերը Պէղճեանը իր եսլըն կանչել կու տայ ու շատ կը ստիպէ ըսելով. մութլախ աս սէնէտը տուէք: Չէ կ'ըսեն, չենք կրնար տալ. կը նային գացողները ճարիրնին կը հատնի, կ'ըսեն. էֆէնտիմ, աս ուզած սէնէտը քեզի կու տանք, քուկին անուանդ, բայց ազգին և պատրիարքին չենք կրնար տալ. անոր միտքը իրեն անուանը չէ ազգին և պատրիարքին անուանը կ'ուզէ առնել քի ազգային սէնէտ ըսուի. երբոր նա յեցաւ քի չի տան պիտոր, շատ նեղացեր ու տաքնալով սրդողեր է. յետոյ կ'ապսպրէ. չըլլայ քի աս խօսքերս ուրիշի ըսէք, չիմանամ պիտոր, յետոյ իմանամ նէ ձեզ գէշ կ'ըսեմ, և այսպէս գացողները ետ դարձան:

Էրթէսի օրը, Պէղճեանը Բուցցիանդիին խապար կը խաւրէ ըսելով. ես շատ ճահտ կ'ընեմ կոր աս մարապետներուն խուլախին համար և աս սէնէտը տան քի խուլախին ըլլայ:

Բուցցիանդին ճուղապ կուտայ, ես չեմ խառնուիր, ասանկ բաներ իրենք գիտեն ըսելով ճամբեց գացողները:

¹ Հոս հայ բնագիրը տաճկերէնէն կը զարտուղի. ուստի հետզհետե հայերէնը պիտի շարունակենք, մինչեւ որ ան աւարտի. յետոյ պիտի սկսինք տաճկերէն բնագիրը հրատարակել, որ օրագրի ձեւը ձգելով, ամփոփոյք մը կ'ընէ դէպքերու:

Աս առաւելն փողերանոցէն ելլող մշակ-
ները մէյմէկ ճամբով Պէղճեանին բիճա ըրին
որ առնէ , ան ալ անուշ կերպով եկէք սու-
ճիները , նստեցէք ըսելով կ'առնէ կոր , նա-
յինք վերջը գէրէ ան լաւ գիտենք քի մին-
չեւ հայոց ժամը չերթաննէ ճար չի կայ , միտ-
քը ինչ է յետոյ կ'իմացուի :

Յետոյ մարապետներուն բանին ստոյգը ի-
մացանք . իրաւ Պէղճեանը ասոնց իտլախը
հանել տուեր է գաղտուկ . ուկեցին քի սէ-
նէտ առնեն , չի կրնաց նէ առնելու , վասն
այսր պատճառի իրենց ինթէրէսօն բուճի ե-
լաւ , Ֆէրմանին խայտը աւերել տուին որ իտ-
լախ չըլլան :

17 Մարտ Կիր. — Տերութենէն հրաման ե-
ղաւ երեք ազգի վրայօք հոռմի պէքեար սա
դուրսի երկիրներէ եկած Ստամպուլի մէջ տա-
սը տարիէն պէրի կարգուած մարդիկ ամէնքը
երթան Անատոլու ուր որ կ'ուզեն նէ : Ա-
տայի հոռմները երթան Ճերմակ ծով , հա-
յոց ազգին մէջ որչափ պէքեար կայ , ու
զուրսերէ եկած Ստամպուլ կարգուած , Անա-
տոլու ուր կ'ուզեն նէ երթան , անկից մատէ
ըսինք քի չէհիրցի տնւոր ու պէքեար , հա-
րուր խանութպան կայ երթաւ խուլումճի
օտոյ կամ խանութ քանի կայ նէ , ամէն էս-
նաֆէն կէսի մնալու է , կէսը օլուի չօճու-
խով երթալու են :

Հրէիցմէ երեք հազար հոգի պատերազմի
պատճառաւ թապիս շինելու ուղեց տէրու-
թիւնը և կամ երթան :

Աս բանին երեւութքը հային համար էր ,
հոռմները ճամբայ դրին սալթ պէքեարները
խաւրկցին , հրեայք ալ նմանապէս :

Իրաւ առաջ տէրութիւնը սկսաւ աս բա-
նը , բայց կրնամ ըսել որ հայք ճահտ ըրին
աս պատճառաւ բոլոր քաթօլիքները կ'աք-
սորենք , գէրէ քանի մը անգամ աշխատե-
ցան չեղաւ տէյի ռիս ունէին . մէյ մըն ալ
առջի ըրած բաներնին որ ուղղափառաց ը-
րին , բոլոր աշխարհ իմացան հայոց ըրածնե-
րը , կ'ուզեն քի հայք հէմ ընեն հէմ տէրու-
թիւնը վար ձգեն , բոլոր աշխարհք որ տէ-
րութիւնը կ'ընէ կոր ըսին :

Ասոր համար կ'ուզենք որ ասոնք խարմա

խարըշ ըլլալով աշխարհ մէկզմէկ անցնի որ
չի հասկցուի և ամէնքն ալ մէկ ջուրի լուա-
ցուի և քաթօլիքներու վրայ եղած բանը
հարցուի նէ ըսեն քի սալթ անոնց չեղաւ ա-
մէն ազգին , նաեւ ձեզի ալ ժամանակ ժա-
մանակ տէրութիւնը այսպէս բաներ ըրաւ
մենք ինչ ընենք մենք պուրուխ խուլի ենք :

18 Բշ. — Հայք սկսան խորհուրդ ընել բո-
լոր ազգով և սկսան թանթանայով հացի հա-
մար է ըսելով տուն տուն գրել թէ ֆատէրի
անցընել :

Աս ալ գիտնալու է քի առջի պօլութեան
ժամանակը ամիսը 180000 քիլէ պուղտայ կու
տային սալթ հասարակ ժողովրդեան համար ,
իւարէթներուն ու տէրութեան զօրքին ալ
պաշխա կու տային . հիմա պատերազմի պատ-
ճառաւ ցորեն չի գալուն , ամիսը 90000 քիլէ
պուղտայ կու տային և ետքերը շատ վար ի-
ջեցուցին , ասկից հասկցիր ամէն մարդոց
խեղճութիւնը , հէմէն ըսենք քի Աստուած
տահա պէթէրէն պահէ զմեզ :

Առաջ ըսի քի հայք շատ ճահտ կ'ընէին
քաթօլիքները աքսորենք տէյի . և աս արա-
ւելըս ինչ որ ըլլար նէ անոնցմէ էր , քեզի
սպաթը ընեմ :

Թագաւորը րաֆաղանի ամսոյն մէջ շատ
օր թէպտիլ կ'ըլլար , չարչուն ժուռ կու գար
և ուզած խանութն ալ կը նստէր : Աս Պէղ-
ճեան Յարութիւնը իր մշակներէն մշակ մը
սպասել կու տայ ինթիսապի խօնախին առ-
ջեւ . թագաւորը հոն ելածին պէս իրեն խա-
պար տայ տէյի , գէրէ շատ օր հոն կ'ելլար
թագաւորը . կուզայ շիտակ հոն կ'ելլայ տու-
վա մէյտանին ֆէսճիի մը խանութ կ'երթայ
կը նստի . մշակը աճէլէ կու գայ կ'ըսէ Պէղ-
ճեանին քի թագաւորը եկաւ . անխտէ կ'ել-
լայ վազնի վազըն կ'երթայ կը գտնա ֆէս-
ճիին խանութը քի նստեր է , և իրեն մե-
ծերն ալ տաղընը կեցեր են . շիտակ կ'եր-
թայ թագաւորին ոտքը կը պագնէ . թագա-
ւորն ալ կ'ըսէ . օ՛ Սըթին , ըսելով կէս սա-
հաթի չափ միատեղ կը խօսին և անկից թա-
գաւորը կ'ելլայ երթալու , անկից ալ միատեղ
ճամբան խօսելով էզմը կ'երթան . թագաւո-
րը կէս ճամբա ձի կը հեծնայ Րամիս չիֆթչ

լիւին կ'երթայ, Արթինն ալ կը դառնայ իր եալըն կ'երթայ, աս բանս ամէն ազգ. այլազգ, հայ, հուռմ, հրեայ ու բոլոր աշխարհ տեսաւ ու լսեց. ասանկ բան չեղած հիմա կ'ըսեմ քեզի, գնաց ինչ խօսեցաւ անոր համար ըսի քի ամէն բանը սա մարդուս գըլխուն տակէն էր:

Ամէն ազգէն մաստէ հայք էվէլթը մէկզկէկ անցան, իրաւ աս պատճառաւ մնացեալ քաթօլիքները պիտի քշէին, լաքին իրենց ում միշտ ըրածնին պէս չեղաւ աս անգամ, ղէրէ դուռնէն եկած պուլթուլթուն ամէն ազգին մէկ էր և քաթօլիկի անուն չի կար:

Սայմախամին ստակ բռնողը կէլկէլ օղլուն ըլլալուն կը կանչէ կ'ըսէ. դուք տահա հոս էք, երեք օր եղաւ տահա ձեզմէ մարդ չի գնաց թէպէտ երթալու էք: Կ'ըսէ կէլկէլը. էֆէնտիմ ազգով կը գրեն կոր թէֆթէր պիտի ըլլայ, նայուի պիտոր և անոր կէօրէ պիտի երթան: Կ'ըսէ իսայմախամը. կը գրեն կոր նայուի պիտոր ինչ ըսել է, երթալու էք, մինչեւ հիմա մարդ մնալու չէր, երէք բայէն երկուքը երթալու է մէկը մնալու է. դուք չէք հասկնար կոր. թախմինիմ խավազով և միւսպաշիրով պիտի երթաք, տահա հէլպէթ ուրիշ խօսք եղած է և նայէ ինչ ըրեր էին. մտմին ինչ թարգ կը դառնայ կոր. կէլկէլ օղլուն շաշըրմիշ ընելով կու գայ մէկալ ամիրայից խապար կու տայ, ամէնքն ալ մէկզմէկ կ'անցնին հատտա ձանիկը և Մագսուտը աս զիշեր իրենց եալըն եկան, էրթէսի առտուն կանուխ ժամ գացին, խոստովանեցան սրբութիւն առին վախերնուն, զէրէ չիտէին քի աս բանիս տակէն ինչ պիտի ելլայ:

Աս բանը որ էլինները լսեցին քի քաթօլիքները հայք աս հացի պատճառաւ պիտոր աքսորեն, Ֆիլէմէնկի էլլին Րէյիֆ էֆին թէսմէն տէվլէթճէ իր պաշ թէրճէմանը կը խաւրէ ըսելով. լսեցի քի կէնէ աքսորելու խօսքեր կայ հայոց ազգին վրայօք հացի պատճառաւ, չըլլայ քի քաթօլիքներուն բան մը ըլլայ. աղէկ նայեցէք որ չըլլայ. և աս եղած բանն ալ լաւ թասհիշ ըրէք, զէրէ էկէր նէօպէթով է նէ անոնք եղան. թասհիշ ըրէք. ըսածը էլլին հայոց վրայօք էր, Կ'ըսէ Րէյի

իզ էֆն թէրճէմանին, էլլի պէյին բարեւ ըրէ. խաթըր կը հարցնեմ, քաթօլիքներուն բան չի կայ. էկէր անոնց ալ երթալ հարկ ըլլայ նէ, մէկ քաթօլիքին մարդ գլուխ քսան հայ չերթալէն սօնրա, քաթօլիկ չ'երթար: Նմանապէս Ֆրանսըզէն եկած մօնսիօ Ժէօպէռը գնաց աս բանիս համար Րէյիս էֆին ըսելով. չըլլայ քի քաթօլիքներուն բան մը ըլլայ, յետոյ տէրութեան մասլահաթները ետ մնալու կէտ մը կ'ըլլայ. ևն. ևն.:

Յետոյ պատրիարքին խաբու օղլանին շալճի Քասպարը դուռը Րէյիզին կ'երթայ, Րէյիզը կ'ըսէ. ինչո՞ւ չեն երթար կոր, ձեզի ինչպէս հասկցնելու է, չէք մի հասկնար կոր, ասիկայ ալ եղած սիւրկիւններուն պէս կը կարծէք կոր, մութլախ ազգերնուդ երեք բայէն երկուքը երթալու են:

Հայք մէկզմէկ անցան որ ասոր տակէն իրենց գէշ բան մը պիտի ելլայ, քաթօլիքներուն գէշ ըլլայ ըսելնիքէն. խորհուրդ ըրին Պէզճեանը ինչ ըրաւ չըրաւ, մէկ մըն ալ ներսէն հրաման ելաւ դուռը քի, գացած պուլթուլթունները առնեն աֆ ըրի, մինչեւ հիմա թէզքէրէ առնող գացողը երթայ, մնացողը թող մնայ տէյի. դուռը ետ առաւ երեք ազգի գացած թուղթերը, հայոցմէ երեք հազար հոգիի չափ պէքեար գացին, հոռոմներէն ալ չորս հազար հոգիի չափ, հրեաներէն փէք քիշ:

Եւ ասոր վրայ տէրութիւնը թուխսսթ տուաւ և դուրսին ալ Ֆէրման գնաց ըսելով. ամէն մարդ ով կ'ուզէ նէ պուղտայ, ալուր, արքայ և այլ ուրիշ ուտելիքները թող բերեն մարդ մը իրենց մանի չըլլայ, և գինն ալ քանի կ'ուզեն նէ ծախեն. Երբոր ամէն մարդ աս խօսքս լսեց նէ, դուրսի երկիրներ պացող գացողի եղաւ, բերող բերողի. ալիւրը, բրինձը, խալտըրըմներու վրայ լեռան պէս դիպուելով անանկ ծախուեցաւ. ամէն մարդ աղքատ, հարուստ սովէ աղատեցաւ Սասուռ ծոյ ողորմութեամբը. էյէր ասանկ չըլլար. չատ բիւրուոր մարդիկ անօթութենէ պիտի ջարթվէր: Աս միջոցիս մէջ 25 հոգի պիլըրդատ քէզ անօթութենէ մեռան, փռան առջեւ մէկզմէկ զարնող, ոտքի տակ չըզնանմիշ

ըլլող, տահա շատ թիւրիւ բաներ եղան քի չի պատմելիր. ինչ է նէ Աստուծոյ ողորմութեամբը պօլլուիս եղաւ, ամէն մարդ քաշածը մոռցաւ:

27 Մարտ Դշ.— Բէյիզ էֆէն հայոց պատերազմը կը կանչէ երկու ժամի խորտար կը խօսին, բայց չիմացանք ի՞նչ բանի համար էր, կ'երեւայ քի քաթօլիքի վրայ էր կանչվածք:

(Շարունակելի)

ԵՐԹՆԵԱՎ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ“ ԳՐԲԷՆ

Գրիգ. Ա.—Գլ. ԻԳ. —ԴԻՍՏԱՍՏԱՆԻ ԵՒ ՄԵԿԱՅՍ ԿԱՏԻԺ. ԲԵՐՈՒՆ ՎԵՐԱՅ:

(Շար.)

Մեծ ու փրկաւիտ փառաւան մը ունի համբերող մարդը, որ նախասինկներ ընդունած պահուն, աւելի կը ցաւի ուրիշին շարունակելու փառ իր նախաստեղծութեան վրայ, որ իր հակառակորդաց համար յօժարութեամբ կ'աղօթէ եւ արտակը կը ներկան լինելու յանգանակներուն, որ ուրիշներէն ներում հայցելու չի դանդաղիր. որ աւելի դիմաւ կ'ողորմի փառ կը բարկանայ, որ ինկնիկն յաճախ բռնութիւն կ'ընէ, եւ կը ձգնի մարմնի թորովին հոգեւոր հետազոտելու:

Լաւ եւս է հիմա մարտի փառ մեղսելու եւ մոռնալիկները խել արմատաւ, փառ քի անկիւն աշխարհին մէջ փառելու յետագայ:

Յիսուսի մեղք գնեց կը խաբեմք այն անկարգ սիրով, զոր ունիմք մեր մարմնին:

ՍՈՒՐԲ ԲԵՌՆԱՐԴՈՍ, ՎԱՐԴԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ

(Շար.)

Գլխովոյն՝ կանոնաւոր տան մը կերպարանքն առնելէն յետոյ, երբ Լանկի մայր վանքին Ռոպեր տը Պուռկոնեք արքան մեռաւ, Սուրբ Բեռնարդոս անոր տեղ արքայ օրհնուեցաւ Շալոն-սիւր-Մառնի եպիսկոպոս Կիլիսիոս տը Շամբույի կողմէ որ գիտութեամբ եւ բարեպաշտութեամբ երեւելի անձնաւորութիւն մըն էր: Այս օրհնութիւնը, որ տեղի ունեցաւ 1115ին վերջեր կամ 1115ին սկիզբները, անձուկ կապով մը իրարու զօգեց այս երկու սուրբ անձերը:

Իր կրօնաւորներուն նկատմամբ ունեցած խոտուութիւնը՝ սկիզբը շատ չափազանց էր: Անոնց հնազան-

դութիւնը, պարկեշտութիւնը եւ Աստուծոյ շնորհքը իր միաքը լուսաւորեցին: Խոտուութեան իր անխորհուրդ եռանդը, գաղափարաց իր սեպհական դատողութիւնները, որոնց մէջ բաւականաչափ նկատի չէր առնուր ընդթեան տկարութիւնը եւ խոտուածութիւնը կամ շնորհքի տարբերութիւնը: Վերջապէս ա՛յնքան արհամարհանք եւ անփառահալութիւն զգաց իր ընթացքին նկատմամբ որ առաջագործը այլեւս բան մը չիտար, քանի որ իր խօսքը փաստակար էր: Բայց մանուկ մը, որ համակ շրջապատուած էր աստուածային լոյսերով, իրեն երեւցաւ եւ տիրաբար հրամայեց միտքը եկածը համարձակ ընել. որովհետեւ Սուրբ Հոգին ինքնին պիտի խօսէր իր բերնով: Միեւնոյն ատեն Աստուած իրեն մասնաւոր շնորհք մը տուաւ ուրիշներու տկարութեանց կարեկցելու եւ ամէն մարդու մտքին հասողութեան յարմարեցու:

Գլխեր մը, երբ իր վանքին շուրջը կը պտտէր, տեսիլքի մը մէջ իրեն յայտնուեցաւ որ, Սրբաշատի պէս, հոգեւոր աստուար բաշխութեան մը հայր պիտի ըլլայ: Տեկնելուն, իր հայրը, այս երջանկութեան մասնակցողներուն առաջիններէն եղաւ: Եկաւ իր որդւոյն առաջնորդութեան ենթարկեց ինքզինքը, Հումբելինա, Սուրբ Բեռնարդոսի քոյրը, այսպէսով ընտանեկան ամբողջ աստուածութեան տէր մնաց: Հումբելինա՝ նախ այսքան մեծ հարստութեամբ զեղծանելով ինքզինքը զեղծութեան տուաւ, բայց անգամ մը Գլխովոյն ազգեկել յետոյ բոլորովին փոխուեցաւ: Այնուհետեւ իր մօրը Ալէքսի օրինակին հետեւեցաւ, եւ երկու տարի յետոյ հրաժեշտ առնելով իր ամուսնէն Պիլեքէթի մենաստանը քաշուեցաւ, ուր ապրեցաւ եւ մեռաւ մեծ սրբութեամբ:

Այն եղանակը, որով Աստուած հոգիները Գլխովոյն կը կոչէր, հիմնաւոր էր: Յաճախ այն տեղ հետաքրքրութեան համար եկող իշխաններ, հոն կը մտային եւ կրօնաւորական սքեմը կ'ընդունէին: Այսպէս կրօնաւոր եղաւ Հերիկոս արքայազարմ իշխանը, Յրանստի Լուդովիկոս Է. Թագաւորին եղբայրը եւ Լուդովիկոս 2.ին եւ Սափոյայի Ատելայիտ իշխանուհիին որդին: Հերիկոսի պաշտօնականներէն մին, Անդրէաս անունով, որ Բարեղքի էր, այս բանին համար շատ լուսանքներ փայծեց Սուրբ Բեռնարդոսի եւ անոր վանքին դէմ եւ իր տիրոջ դէմ: Իսկ յարակաւները զործեց: Բեռնարդոս, ամէն պատասխանի տեղ, մարդարեւացաւ անոր թէ՛ Գուռն ալ նոյն ճամբան պիտի բռնէ: Եւ իրօք, պաշտօնեան մեկնելէն յետոյ, խղճի ա՛յնքան բուռն խայթելու նշանակ էր, եւ դարձի գալու այնքան սաստիկ փափաք մը զգաց որ անյապող առաւուն կանուխ եղաւ Գլխովոյն դարձաւ եւ խոնարհարար խնդրեց որ վինքը ներս ընդունին:

Բեռնարդոս թէեւ ուրիշներուն համար հոմակ գութ ու գորով կարած էր, բայց իր անձին նկատմամբ մեծ խստութիւն մը պահած էր: Իր մարմնից կը զրկէր ամէն կազդուրիչ բաներէ, եւ ընդհակա-

ուսկն կ'ենթարկէր զայն ամէն տեսակ ճնշումներու։ Ասով ծանրապէս հիւանդացաւ։ Շալոնի եպիսկոպոսը, որ Սուրբին բարեկամն էր, խնդրեց և ընդունեցաւ որ անիկայ տարիի մը չափ իրեն տրուի՝ որպէսզի անոր առողջութեան հոգ տանի։ Եպիսկոպոսը յանձնեց զայն բժիշկի մը քը կը խոստանար յաւակնօրէն ան-միջապէս առողջացնել։ Այս մարդը կոշտ, յանձնա-պատան և շատ տգէտ էր, և Սուրբին հակառողջու-կան բաներ կուտար, օրինակի համար, կարագի տեղ ճարպ, ջուրի տեղ ձէթ։ Բայց Սուրբը ամէն բան կ'ընդունէր կատարեալ անտարբերութեամբ։ Եւ այս կորանքի և հպատակութեան վիճակին մէջ ա'յնքան ուրախ էր, որ կարծես արգէն իսկ սկսած էր ճաշա-կել արքայութեան փափկութիւնները։

(Շարունակելի)

ՀՌՈՍԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՕՍՋՈՐԴՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՈՐ

(Շար. եւ վերջ)

Գանք վերջապէս այն հանգամանքին որ վեհապետի մը ամենէն կարեւոր է, և միան-գամայն ընտրական դրութեան մէջ ամենէն աւելի վտանգի ենթակայ կը գտնուի, կ'ու-ղեմ ըսել անկախութիւնը։ Ժառանգական միապետութեան կողմնակիցները յաճախ տարփողած են այն գերագոյն հեղինա-կութիւնը, որ իր իշխանութիւնը մի միայն Աստուծոյ տնայնոյ, ամէն կուսակցութիւն-ներէ վեր դիւրմ մը կը բռնէ, և այնքան կը բարձրանայ որ կրնայ անկողմնակալ դա-տաւոր հանդիսանալ ներքին վէճերու մէջ, և ասկէ զատ ապագայի մասին ինքզինքը ապահովուած զգալով, կրնայ անկասկած նուիրուիլ ամենէն ընդարձակ ծրագիրներու գործադրութեան։ Այս յատկութիւններն ալ կը գտնենք արդեօք Քահանայապետութեան մէջ։ Արդէն ցոյց տուինք թէ ան ունի ասոնց ամենէն հիմնական պայմանը, սկիզբէն յիշե-լով թէ Պապը գիտակից է որ ինք Աստուծոյ կ'ընդունի իր իշխանութիւնը և ոչ թէ քրիս-տոնեայ հասարակութենէն։ Կրնանք նաեւ ցոյց տալ որ անոր ընտրութեան կերպերն իսկ կը նպաստեն այս անկախութիւնը ա-պահովելու։ Յաճախ նկատել տրուած է, մին այն պատճառներէն որ, Միացեալ Նա-հանգաց մէջ, աւելի բարեխառն հանգամանք

մը կու տան հանրավարական կառավարու-թեան, և զայն աւելի տեւական կ'ընեն հոն քան այլուր, նախագահին շնորհուած մեծ իշխանութիւնն է։ Անիկա Պետութեան պա-տասխանատու գլուխն է, և իր նախարար-ները կ'ընտրէ իր յարմար տեսած կերպով, առանց խորհրդարաններու հաւանութեան պէտք ունենալու։ Անիկա չորս տարուան համար անուանուած է, ուստի և խորհրդա-րանական կառավարութեան մը առաջին պաշտօնէին պէս, ամէն վարկեան մեծա-մասնութեան քմահաճոյքին խաղալիկ ըլլա-լու վտանգին մէջ չի գտնուիր։ Հոս կայ արդէն սկզբնաւորութիւն մը անկախութեան, որուն արդիւնքները արդէն փրկաւէտ են։ Սակայն այս նախագահը դարձեալ ընտրուած է կուսակցութենէ մը, որուն հետ ի հարկէ կապուած է. ասկէ զատ անիկայ լոկ առժա-մանակեայ պաշտօնեայ մըն է, և կրնայ իր վերընտրութեան մասին հոգ ընել։ Ծայրա-գոյն Քահանայապետին անկախութիւնը բո-լորովին տարբեր է։ Նախ անիկայ չէ և չի կրնար ըլլալ կուսակցութեան մը ընտրեալը։ Այս ըսել չէ թէ, յաճախ, պապնորի ժո-ղովը երկու այլ եւ այլ ընտրելի ունեցող խումբերու չի բաժնուիր։ Բայց, այս պարա-գային, անոնցմէ և ոչ մին կ'ընտրուի։ Ար-դարեւ, շատ դարերէ ի վեր անփոփոխ պահ-ուած իմաստնագոյն օրէնքով մը հաստատ-ուած է որ քահանայապետը չի կրնար ըն-տրուիլ բայց եթէ քուէներու երկու երրորդ մասով։ Ուստի եթէ երկու կողմերը իրարու գրեթէ հաւասարին, եթէ երկուքն մէկը աննշան թուի մը չիջնէ, ի հարկէ պէտք պիտի ըլլայ իրաւախոհութեան զալ։ Ուստի քահանայապետը միշտ ամէնուն մարդը պիտի ըլլայ, և ասով իր իշխանութիւնը աւելի եւս ուժ կ'առնու։ Եկեղեցին լաւ համարե-ցաւ քիչ մը երկար ամփոփ պարագլութեանց ենթարկուիլ քան այս կարգադրութիւնը դռնել։

Ասկէ զատ քահանայապետը կ'ընտրուի ցկեանս։ Վերընտրուելու պէտք չունի, և զերծ է ունէ մէկէ մը դատուելու կամ պաշ-տօնանկ ըլլալու պատահականութենէն։ Ոչ

դասի յուսմեք արտուն առաջին։ Ուստի իր անկախութիւնը կատարեալ է։ և, Պոսուէին՝ թագաւորներու տուած խորհուրդին համեմատ, ան մի միայն չարիք գործելէ վախնալու է։ Ահաւասիկ ստուգիւ մեծ ոյժ մը, և, մեր արդի կառավարութեանց մէջ, ամէնքը հետամուտ են աւելի կամ նուազ հանրային կարծիքին վրայ յենլու։ սքանչելի մտայնութիւն մըն է այս արդարեւ։ Հոս միտք չունինք ցոյց տալու թէ քահանայապետները ի՞նչպէս գործածեր են այս անկախութիւնը, թէ ի՞նչպէս, ընդդիմանալով, երբեմն գերմարդկային կորովով մը, հոսանքներու որ իրենց շուրջը գտնուողներէն շատերը անյաղթելի կը կարծէին, ծառայութիւն մատուցած են քաղաքականութեան և մարդկութեան։ Այս սուրբ յանդըհութեանց հուսկ վերջին գաղտնիքին հասու ըլլալու համար հարկ կ'ըլլայ աւելի խորը թափանցել և իրենց ընտրութիւնը կանոնաւորող օրէնքէն տարբեր բան մը նկատի առնուլ։ Կարգադրութեանց ուժը, որ մեծ է, ունի որոշ սահմաններ։ Երբ կը խնդրուի որոնել գտնել բացատրութիւնը այն ամէն զէպքերուն որ Եկեղեցւոյ մէջ տեղի կ'ունենան, պէտք է դիմել անոր կեանք տուող ներքին և գերբնական հոգիին։ Յաջորդութեան օրէնքը, զոր ուսումնասիրեցինք, անոր հրաշալի գործունէութեան արտաքին մէկ ցոյցն է միայն։ միջոց մըն է այն զոր ինք ձեռք առած է մեծ խոհմուտութեամբ՝ ինչ ինչ վտանգներ իրմէ հեռացնելու համար։ Այս միջոցը կարելի չէր ասկէ աւելի լաւ կերպով նպատակին պատշաճեցնել, և Սկիւսդ Գոնդ սխալած չէ՝ մատնանիչ ընելով նոյնը իբրեւ քաղաքական ինստիտուցիոն։ Միայն թէ աւելի յառաջ երթալու էր։ Ուրիշ շատ հիմնարկութիւններ աշխատած են մշտատեւութեան միջոցները ձեռք առնելու, և ոչ մէկը յաջողած է։ Ի՞նչ է պատճառը որ մի միայն քահանայապետութիւնը և Կաթողիկէ Եկեղեցին, որուն միջակէան է այն, կը զիմանան՝ ամենաներհակ պայմաններու հակառակ, Մարդկային զուգադրութիւններ չեն կրնար զայս

